Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փողոց, 123)

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ
ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ

ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված
Անահիտ Արմանի Նալբանդյանի՝
«Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Արդի իրավագիտության և մասնավորապես՝ իրավունքի տեսության կարևոր առաջնահերթություններից է ժամանակակից սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական և քաղաքական արագացող զարգացումների պայմաններում արտահայտվող կենդանի իրավունքի, դրա շարժընթացի կառուցվածքի ճանաչումը ու այդ շարժընթացի շերտերում իրավունքի հայտնաբերումը, որոշակիացումը և դրա միատեսակ կիրառման համալիր խնդրի լուծումը: Այս բավականին բարդ ու միանշանակ լուծում չունեցող խնդրի ներքո է գտնվում նաև նախադեպային իրավունքի հիմնահարցի ուսումնասիրությունը, որի համար անհրաժեշտ է մեթոդաբանական, պատմահամեմատական, կոնկրետ երկրի, տարածաշրջանային և միջազգային դատական մարմինների դատաիրավական պրակտիկայի, ինչպես նաև այդ ամեից բխող միջառարկայական հետազոտությունների բնագավառում զգալի աշխատանք:

Նման կարևոր խնդրի լուծմանն է ուղղված նաև տիկին Անահիտ Նալբանդյանի գիտական հետազոտությունը: Նա իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել դատական

նախադեպի և դատական պրակտիկայի տեղն ու դերը ազգային իրավական համակարգում, բացահայտել դատական նախադեպի և դատական պրակտիկայի էությունն ու բովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց էական տարբերությունները, վերլուծել բարձր դատական ատյանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների գործառույթներն ու իրավական ազդեցությունը, դիտարկել դատական նախադեպը և դատական պրակտիկան որպես դատական նորմաստեղծ գործունեության ձևեր, հիմնավորել բարձր դատարանների (վճռաբեկ դատարանի և սահմանադրական դատարանի) իրավական դիրքորոշումների համապարտադրելիությունը դատական և պետական իշխանության մարմինների համար:

Փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչպես դատական նախադեպը և դատական պրակտիկան կարող են նպաստել օրենսդրական բացերի լրացմանը, իրավական անորոշությունների հաղթահարմանը և իրավակարգավորումների հետևողականության ապահովմանը, հետազոտողը կիրառել է համեմատաիրավական, համալիր-համակարգային՝ սիներգետիկական, հերմենևտիկական և այլ վերլուծության մեթոդներ՝ ուսումնասիրելով ինչպես Ընդհանուր իրավունքի, այնպես էլ Մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգերի փորձը: Բավականին մանրամասն ուսումնասիրվել են նշված իրավական համակարգերում նախադեպային իրավունքի նկատմամբ առկա մոտեցումների ձևավորման ընթացքը, դրանց համար հիմք հանդիսացող պատմական փաստերը, նախադեպի կիրառական պրակտիկայում դրսևորված արդյունավետությունն ու դրա հիման վրա բյուրեղացած կարծիքներն ու լուծումները:

Ուշագրավ է նաև, որ հետազոտողը բավականին մանրամասն վերլուծել է դատական նախադեպի և դատական պրակտիկայի հասկացությունները՝ առանձնացնելով դրանց էական տարբերությունները և բովանդակային առանձնահատկությունները: Հատկանշական է, որ աշխատանքում տեղ են գտել բարձր դատարանների (ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի) իրավական դիրքորոշումների գործառույթների և իրավական ազդեցության վերլուծությունը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի առանձնահատկությունները:

Ընդգծելու արժանի է նաև այն, որ հետազոտողը փորձել է խորանալ դատական հայեցողության էության մեջ՝ դա անելով ժամանակակից դատաիրավական բարեփոխումների և իրավական համակարգի արդիականացման համատեքստում: Արդյունքում եզրակացրել է, որ դատական հայեցողությունն ունի էական դեր դատական

նախադեպի և դատական պրակտիկայի ձևավորման գործընթացում՝ թույլ տալով դատարաններին ճկուն մոտեցում ցուցաբերել օրենքի կիրառման հարցում և արձագանքել հասարակական կյանքի դինամիկ զարգացմանը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ, կցանկանայի դրա կապակցությամբ ներկայացնել որոշ նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներից առաջինը նշում է, որ ազգային իրավունքի զարգացման արդի փուլում ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները և դատական պրակտիկան ունեն էական նշանակություն իրավակարգավորումների արդյունավետության, իրավական որոշակիության և օրենքի միատեսակ կիրառման ապահովման, իրավական ու դատական քաղաքականության վերաբերյալ միատեսակ հայեցակարգային ռազմավարության մշակման ու իրացման համար: Կարելի է նկատել, որ ՀՀ բարձր դատարանների իրավական դիրքորոշումների ու պրակտիկայի դերի կարևորությունը՝ միատեսական դատական պրակտիկայի ապահովման, իրավական որոշակիության ապահովման, դատաիրավական քաղաքականության մշակման գործում և դրա հիման վրա ու դրա համար ռազմավարությունների մշակման ժամանակ երբևէ կասկածի տակ չի եղել: Ավելին. Հայաստանի Հանրապետությունում ընդունված գրեթե բոլոր դատաիրավական բարեփոխումների ռազմանավարան ծրագրերում, հատկապես՝ դրանց հիմնավորման հատվածներում, մշտապես ընդգծվել են Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների որոշումների և պրակտիկայի առանցքային դերն այդ ռազմավարական փաստաթղթերի մշակման գործում: Այլ բան է, որ ոչ միշտ է այդպես եղել, սակայն այս կարևորության գիտակցումը գրեթե միշտ ընդգծվել է: Ուստի կարևոր է հասկանալ հեղինակի կողմից նման կարևորության ընդգծումը՝ որպես պաշտպանության հանվող դրույթ ներկայացնելը:
2. Դատական նախադեպի ինստիտուտը բազմիցս ուսումնասիրված է ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան գիտական գրականության մեջ: Այդ համատեքստում հարց է առաջանում՝ ինչո՞վ է տվյալ ատենախոսության գիտական նորույթը տարբերվում արդեն գոյություն ունեցող տեսական մոտեցումներից: Առաջարկվող եռաստիճան մոդելը՝ պարտադիր, պայմանականորեն պարտադիր և ուղեցուցային նախադեպերի տարբերակմամբ, տեսականորեն հետաքրքիր է, սակայն գործնականում ինչպես է որոշվելու՝ տվյալ նախադեպը, օրինակ, պարտադի՞ր է, թե

պայմանականորեն պարտադիր կամ ուղեցույցային, ինչպես նաև օրենսդիր մակարդակով որքանո՞վ է հստակ կարգավորվելու նախադեպային կիրառման պրակտիկան և որքանո՞վ է այդ կարգավորումը արդյունավետ լինելու:

3. Ատենախոսության մեջ հեղինակը անդրադառնում է դատական նորմաստեղծ գործունեությանը՝ այն դիտարկելով որպես ժամանակակից դատական իշխանության կարևոր դրսևորում: Այս մոտեցումը տարածում է ոչ միայն Ընդհանուր իրավական համակարգի երկրների դատական իշխանություններին, այլ նաև, օրինակ, Մայրցամաքային իրավունքի երկրների վրա: Այստեղ հարց է առաջանում, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետության առկա սահմանադրական ու օրենսդրական կարգավորումների շրջանակներում դատական նորմաստեղծ գործունեության ընդունումը չի հակասում իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքին և օրենսդիր իշխանության բացառիկ լիազորություններին, իսկ եթե ինչ-որ կերպ այն հաջողվի համագոյակցել օրենսդրի իշխանության հետ, ապա ինչպես է հնարավոր թե՛ օրենսդրական, թե՛ կիրառական մակարդակով ապահովել իշխանությունների տարանջատան սկզբունքի գործնական անսասանությունը: Այս համատեքստում կարևոր է հեղինակի դիրքորոշման հստակեցում առ այն, թե ինչ սահմաններում է հնարավոր ընդունել դատարանի նորմաստեղծ դերը՝ առանց խաթարելու իրավական հավասարակշռությունը:

4. Ատենախոսության մեջ դատական նախադեպը ներկայացվում է որպես իրավական համակարգում պարտադիրության որոշակի աստիճանի կիրառական դեր ունեցող ինստիտուտ, սակայն միաժամանակ պահպանվում է այն դիրքորոշումը, որ ՀՀ իրավակարգում իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտն է: Այս առումով առաջանում է մի փոքր հակասություն. եթե դատական նախադեպը չունի իրավունքի աղբյուրի կարգավիճակ, ապա ինչպե՞ս կարելի է հիմնավորել դրա պարտադիր կամ «կիսապարտադիր» կիրառելիությունը, և արդյոք սա չի խախտում իրավունքի աղբյուրների դասական հիերարխիան:

Վերոնշված դիտողությունները, այնուամենայնիվ, չեն արժեզրկում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Անահիտ Արմանի Նալբանդյանի՝ «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի

Հանրապետության կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ պետության և իրավունքի
տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ

Տ.Վ. ՍԻՄՈՆՅԱՆ

02.02.2026թ.

Տ.Վ. Սիմոնյանի ստորագրությունը հաստատում եմ՝
«Ի ԷԼ ԷԼ Գործընկերություն» ՓԲԸ
իրավաբանական գրասենյակի
Գլխավոր տնօրեն Գոհար Գևորգյան